

**09.09.24 - 20.09.24**

09:00

### **Անցանց**

Գրանցումը փակ է



[Պահպանել Google օրացույցում](#)

ԵՊՀ ISTC կենտրոնի կոնֆերանս դահլիճ (ԵՊՀ 7-րդ մասնաշենք, 6-րդ հարկ)

**Ս.թ. սեպտեմբերի 9-20-ը ԵՊՀ ISTC կենտրոնի կոնֆերանս դահլիճում** (ԵՊՀ 7-րդ մասնաշենք, 6-րդ հարկ) կանցկացվի ԵՊՀ ՈԻԳԸ նախաձեռնած «Հոդվածագրության դպրոց-2» կրթական ծրագիրը՝ նվիրված ԵՊՀ հիմնադրման 105-ամյակին:

Բացման միջոցառումը տեղի կունենա ս.թ. սեպտեմբերի 9-ին՝ ժամը 16:00-ին: Ծրագրի մասին ելույթով հանդես կգա ՈԻԳԸ նախագահ Սիրանուշ Բաղումյանը: Բանախոսությամբ հանդես կգա պ.գ.թ., դոցենտ Միքայել Մալխասյանը:

«Հոդվածագրության դպրոց-2» կրթական ծրագիրը կանցկացվի սեպտեմբերի 9-20-ը: Ծրագրին կարող են մասնակցել ՀՀ բոլոր բուհերի և գիտահետազոտական այլ հաստատությունների ուսանողները:

Ծրագրի իրականացման ընթացքում հոդվածագրության տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ դասախոսություններով հանդես կգան պ.գ.թ., դոցենտ Միքայել Մալխասյանը, պ.գ.թ., դոցենտ Մհեր Հովհաննիսյանը, տ.գ.դ., դոցենտ Միքայել Ալեքսանյանը, Տնտեսագիտության ֆակուլտետի դասախոս Մերի Փանոսյանը և ուրիշներ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

(+37460) 710000

info@ysu.am